



from the office of the
Diocese of the Armenian Church of America
 630 Second Avenue, New York, N.Y. 10016, tel: (212) 686-0710

news

Ամերիկայի Արեւելեան Թեմէն Ընդ

ԹԵՄԱԿԱՆ ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿԻ ԵԶՐԱՓԱԿԻՉ ՀԱՆՐԱՍՈՒԹԻՒՆՆԵՐ

Ս. ԾԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐՈՒՄ -
ՀԱՆՈՒՄԱՎՈՐ Ս. ՊԱՏԱՐԱԳ՝ ՄԱՍՈՒՆԵՐԻ
ԱՄԵՆ. Տ. ԹՈՐԳՈՄ ՊԱՏՐԻԱՐԽ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ԿՈՂՄԷ

Ամերիկայի Հայոց Արեւելեան Թեմին մէջ 1998 տարուան ընթացքին զանազան հանդիսութիւններով նշեցաւ Թեմի հաստատման 100-ամեակը: 1888 թուականին օրուան Ամենայն Հայոց Կաթողիկոս Խրիմեան Հայրիկ մասնաւոր Կոնդակով մը Ամերիկայի մէջ հաստատեց Առաջնորդական Թեմ մը: Անցնող հարիւր տարիներուն ընթացքին այդ Թեմը աճեցաւ ու բարգաւաճեցաւ եւ վերածուեցաւ երեք առանձին Թեմերու: Միայն մէկ եկեղեցիով սկիզբ առած Թեմը այսօր ունի մօտ հարիւր կազմակերպուած եկեղեցիներ եւ շուրջ մէկ միլիոն հաւատացեալներ:

Տարուան ընթացքին 100-ամեակին նուիրուած ձեռնարկներ կազմակերպուեցան՝ թէ՛ տեղական եւ թէ՛ Թեմական մակարդակով: Հարիւրամեակի Թեմական պատգամաւորական Ժողովին նախագահեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Առաջին:

Հայաստանեայց Եկեղեցւոյ Արեւելեան Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Խաթակ Արք. Պարսամեան ամէն ջանք ի գործ դրաւ՝ որպէսզի հարիւրամեակի հանդիսութիւնները ըլլան պատշաճ, վայելուչ եւ որակաւոր:

Հարիւրամեակի եզրափակիչ հանդիսութիւնները տեղի ունեցան Շաբաթ Դեկտեմբեր 19-ին եւ Կիրակի Դեկտեմբեր 20-ին:

Մօտ հազար հանդիսականներ Շաբաթ Դեկտեմբեր 19-ի երեկոյեան փութացած էին Ս. Վարդան Մայր Տաճար՝ ներկայ գտնուելու համար Ս. Ծննդեան տարեկան համերգին, որուն կը նախագահէր Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Առաջին: Արեւելեան Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Խաթակ Արք. Պարսամեանի պաշտօնական հրաւերով ներկայ էր նաեւ Թեմի նախկին Առաջնորդ եւ այժմու Երուսաղէմի Առաքելական Աթոռի Պատրիարք Ամեն. Տ. Թորգոմ Արք. Մանուկեան:

Յայազրին բացումը կատարեց Ս. Վարդան Մայր Տաճարի
Լուսարարապետ Արժշ. Տ. Մարտիրոս Քհնյ. Չեւեան, որուն
բարեգալստեան խօսքէն առաջ յայտնի երգեհոնահար Պերճ Ժամկոչեան
նուագեց:

Աւանդութիւն դարձած Ս. Մննդեան Համերգին իրենց
մասնակցութիւնը բերին Ս. Վարդան Մայր Տաճարի Դպրաց Դասը եւ
Նիւ Եորքի ու Նիւ Ճըրզիի ամէնօրեայ վարժարաններու պատանեկան
երգչախումբը եւ Սրբոց Նահատակաց Եկեղեցւոյ կրտսերաց դպրաց
դասը՝ ղեկավարութեամբ Խորէն Մէյխանէճեանի եւ երգեհոնի
ընկերակցութեամբ Պերճ Ժամկոչեանի ու դաշնամուրի
ընկերակցութեամբ Տիգրան Մկրտչեանի, Փրավիտէնս Ռոտ Այլընտի Ս.
Սահակ եւ Ս. Մեսրոպ Եկեղեցւոյ պատանեկան երգչախումբը՝
ղեկավարութեամբ Կոստանդին Պետրոսեանի եւ դաշնամուրի
ընկերակցութեամբ Ճաննա Գեղամեանի եւ Ուոթթըրթաուն
Մասսաչուսէցի Ս. Յակոբ Եկեղեցւոյ պատանեկան երգչախումբը՝
ղեկավարութեամբ Արթիւր Վերանեանի եւ երգեհոնի
ընկերակցութեամբ Պերճ Ժամկոչեանի ու դաշնամուրի
ընկերակցութեամբ Վիքթորիա Մագինի:

Ս. Վարդան Մայր Տաճարի Դպրաց Դասի մեներգիչները՝ Անահիտ
Պօղոսեան, Անահիտ Զաքարեան, Յասմիկ Մէյխանէճեան, Մարօ
Փարթամեան եւ Վաղարշակ Օհանեան եւս բերին իրենց
մասնակցութիւնը, մատուցելով հոգեւոր բնոյթի երգեր, տաղեր եւ
չարականներ:

Համերգի ընթացքին ներկայացուեցան հայկական եւ անգլիական Ս.
Մննդեան երգեր ու չարականներ, ինչպէս նաեւ Վ. Մարգսեանի, Ա.
Պարթեւեանի եւ Խորէն Մէյխանէճեանի ստեղծագործութիւնները:
Առաջին անգամ ըլլալով ներկայացուեցաւ Ամեն. Տ. Թորգոմ Պատրիարք
Մանուկեանի բանաստեղծութեան վրայ Խ. Մէյխանէճեանի
հեղինակութիւնը՝ «Յուշեր Հայկական» խորագիրով:

Հրամցուած բոլոր երգերը արժանացան ներկաներու
ծափողոյններով արտայայտուած գնահատանքին:

Ղեկավարութեամբ Արժշ. Տ. Մարտիրոս Քհնյ. Չեւեանի եւ
ատենապետութեամբ Տիկ. Արտեմիս Նազըրեանի Համերգի Կարգադիր
Յանձնախումբի կատարած անխոնջ ջանքերուն շնորհիւ համերգը
արձանագրեց մեծ եւ գովելի յաջողութիւն:

Յամերգի աւարտին՝ Առաջնորդ Գերշ. Տ. Խաթակ Արք. Պարսամեան
իր գնահատանքը արտայայտեց եւ ներկայացուց Երուսաղէմի Պատրիարք
Ամեն. Տ. Թորգոմ Արք. Մանուկեանը, եւ հրաւիրեց զինք որպէսզի իր
խոսքը ըսէ:

Պատրիարք Սրբազան Հայրը խոր յուզումով ըսաւ որ ինք Նիւ
Եորք եկած է գլխաւորաբար հանդիպում ունենալու Ամենայն Հայոց
Կաթողիկոսին հետ եւ անոր ներկայացնելու շուտափոյթ ապաքինման իր
անձնական բարեմաղթութիւնները: Ապա, արտայայտուեցաւ
ներկայացուած համերգէն քաղած իր դրական տպաւորութիւններուն

մասին: Իր խօսքի աւարտին՝ հրաւիրեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ որպէսզի օրհնէ համերգին մասնակցողներն ու ներկաները:

* * *

Կիրակի Դեկտեմբեր 20—ի առաւօտեան Ս. Վարդան Մայր Տաճարին մէջ հանդիսաւոր Ս. Պատարագ մատոյց Երուսաղէմի Առաքելական Աթոռի Պատրիարք Ամեն. Տ. Թորգոմ Արք. Մանուկեան՝ աւրնթերակալութեամբ Ս. Էջմիածնի Հոգեւոր Ճեմարանի Տեսուչ Հոգւ. Տ. Հայկազուն Մ. Վրդ. Նաճարեանի եւ Հոգւ. Տ. Գրիգոր Վրդ. Մագսուտեանի: Կրօնական արարողութեան կը նախագահէր Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Առաջին: Երգեցողութիւնը կատարեց Մայր Տաճարի Դպրաց Դասը՝ ղեկավարութեամբ խմբավար Խորէն Մէլիսանէճեանի:

Պատարագիչ Պատրիարք Սրբազան Հայրը իր քարոզին մէջ ըրաւ պատմականը Երուսաղէմի մէջ հայերու գոյութեան եւ արտայայտուեցաւ այսօրուան Հայ Երուսաղէմի մասին:

Յաւարտ Ս. Պատարագի՝ Մայր Տաճարի դասին մէջ տեղի ունեցաւ ութը ազգայիններու Հայրապետական Կոնդակի եւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ շքանշանի յանձնումը: Յիշեալ ազգայինները մեծագումար նուիրատուութեամբ իրենց մասնակցութիւնը բերած էին Հարիւրամեակի Հիմնադրամին: Անոնք են.

Տիկին Սիրան եւ ողբ. Սարգիս Կապրիէլեան
Տիկին Թագուհի եւ ողբ. Սարգիս Սուլթանեան
Տէր եւ Տիկին Ալեքս եւ Վրդինիա Տատուրեան
Տէր եւ Տիկին Հայկ եւ Ասդրիտ Տատուրեան
Տիար Սարգիս Տատուրեան (որ յառաջացեալ տարիքին պատճառաւ ներկայ չէր)

Տէր եւ Տիկին Բիւզանդ եւ Անահիտ Բիրանեան
Տէր եւ Տիկին Վահագն եւ Յասմիկ Յովնանեան
Օր. Անուշ Մաթեւոսեան

Առաջնորդ Գերշ. Տ. Պաթակ Արք. Պարսամեան ընդհանուր առմամբ խօսեցաւ Հայրիւրամեակի Հիմնադրամին մասին եւ առանձին առանձին ներկայացուց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի բարձրագոյն պատիւին արժանացող ազգայինները՝ թուելով անոնց կատարած բարերարութիւնները: Կարդացուեցան Հայրապետական Կոնդակները եւ յանձնուեցան շքանշանները: Ապա, Ամենայն Հայոց Կաթողիկոսը օրհնեց զանոնք:

Ի պատիւ յիշեալ մեծարեալներուն եւ անցնող տարիներու ընթացքին Առաջնորդարանիս ի նպաստ սիրայօժար կերպով իրենց տաղանդն ու կարողութիւնները ի սպաս դնող կամաւորներուն տրուեցան ճաշկերոյթ մը Հայկ եւ Ալիս Գալուքճեան հանդիսասարահին մէջ: Այս ճաշկերոյթը, որ կը վայելէր Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահութիւնը, կազմակերպուած էր Առաջնորդարանի Հայ Եկեղեցւոյ Հիմնադրամին կողմէ: Կարգադիր Յանձնախումբի ատենապետն էր Տիկին Լիւսի Տապաղեան:

Ճաշկերոյթին ներկայ էր նաեւ ՄԱԿի մօտ Հայաստանի Հանրապետութեան մնայուն ներկայացուցիչ եւ լիազօր դեսպան Տոքթ. Մոսէս Ապելեան եւ իր ազնիւ Տիկինը:

Ճաշկերոյթի բացման խօսքը կատարեց Առաջնորդարանի Տնտեսական Բաժանմունքի տնօրէն եւ Հայ Եկեղեցւոյ Հիմնադրամի վարիչ—տնօրէն Տիար Ժորճ Քասիս, որ բացատրեց նպատակը կազմակերպուած ճաշկերոյթին, որով փակուած կը կատարուէր Թեմական Հարիւրամեակին: Դաշնակի վրայ դասական գործեր ներկայացուց Հայրենի տաղանդաւոր դաշնակահար Հելեն Ետիկարեան: Երիտասարդներու անունով բաժակ առաջարկեց Տիկ. Արտա Նազըրեան Յարութիւնեան: Հոգչ. Տ. Մամիկոն Արդ. Քիլէճեան երգեց Ս. Յակոբ Մծբնայ Հայրապետին նուիրուած շարական մը: Առաջնորդ Գերշ. Տ. Նսափակ Արք. Պարսամեան նախ շնորհաւորեց շքանշանակիրները, եւ ապա իր ուրախութիւնը յայտնեց որ Հարիւրամեակի հանդիսութիւնները իրենց աւարտին կը հասնին երկու նոր եկեղեցիներու կառուցումով. մին՝ Ուայթ Փլէյնս Նիւ Եորքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցին՝ օծուած Դեկտեմբեր 6—ին, եւ միւսը՝ Մայամի Ֆլորիտայի Ս. Մարիամ Աստուածածին Եկեղեցին՝ օծուած Դեկտեմբեր 13—ին: Սրբազան Հայրը դարձեալ ներկայացուց Պատրիարք Ամեն. Տ. Թորգոմ Արք. Մանուկեանը, յիշելով եւ իր գնահատութիւնը յայտնելով որ Թեմի հարիւր տարուան պատմութեան մէջ քսանըհինգ տարիներու առաջնորդութիւնը վարած է:

Պատրիարք Սրբազան Հայրը այս անգամ խօսեցաւ Երուսաղէմի Պատրիարքութեան պատկանող հողերուն մասին, եւ կոչ րրաւ հայ գործատէրերուն եւ ճարտարապետներուն՝ որպէսզի երթան Երուսաղէմ եւ այդ պարապ հողերուն վրայ կառուցանեն շէնքեր եւ կամ գործարաններ:

Բոլոր ներկաներուն կողմէ երգուած Տէրունական Աղօթքով եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնութեամբ վերջ գտաւ ճաշկերոյթը:

Դեկտեմբեր 21, 1998

Նիւ Եորք, Ն. Ե.